

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 19/07

«Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության վարչության նիստի

ք. Երևան

6 դեկտեմբերի 2019թ.

Մասնակիցների ցուցակ՝

- | | |
|------------------------|-----------------------|
| 1. Ալբերտ Տոնեյան | 8. Իգոր Մկրտումյան |
| 2. Անդրանիկ Ալեքսանյան | 9. Լիաննա Գալստյան |
| 3. Աննա Կարախանյան | 10. Կարեն Գասպարյան |
| 4. Արամ Վերդյան | 11. Կոյա Հովհաննիսյան |
| 5. Արման Խաչատրյան | 12. Միսակ Խաչատրյան |
| 6. Արման Ներսիսյան | 13. Քրիստինա Հակոբյան |
| 7. Գրիգորի Սադյան | |

Նիստին ներկա էր նաև կազմակերպության անդամ Վահան Հովսեփյանը:

Նիստի սկզբում նիստի նախագահող ընտրվեց Իգոր Մկրտումյանը, քարտուղար՝ Լիաննա Գալստյանը: Նախագահողը տեղեկացրեց, որ քվորումն ապահովված է և առաջարկեց հաստատել օրակարգը: Վարչության անդամների կողմից առաջարկվեց օրակարգում փոփոխություններ անել: Ներկայացված փոփոխությունները դրվեցին քվեարկության և միաձայն ընդունվեցին:

Օրակարգ՝

1. «Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության անդամների կողմից վճարման ենթակա տարեկան անդամավճարի չափը և դրա գանձումը կազմակերպելու կարգը սահմանելու մասին:
2. Մի շարք անձանց «Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության անդամագրելու մասին:

1. **«Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության անդամների կողմից վճարման ենթակա տարեկան անդամավճարի չափը և դրա գանձումը կազմակերպելու կարգը սահմանելու մասին:**

Հարցի վերաբերյալ ելույթ ունեցավ Իգոր Մկրտումյանը՝ նշելով, որ կազմակերպության անդամակցության դիմումների քանակը վերջին տարվա ընթացքում նկատելիորեն ավելացել է, ինչը մի կողմից ուրախալի է, սակայն կա նաև մտավախություն, որ այդ անդամներն իրական հետաքրքրվածություն չունեն կազմակերպության գործունեության վերաբերյալ, այլ անդամակցում են ինչ-որ շահերից ելնելով: Ըստ այդմ, անդամակցության տարեկան վճարն ավելացնելու պարագայում, հնարավոր է անդամագրել այն անձանց, ովքեր իրական հետաքրքրվածություն ունեն կազմակերպության գործունեության մեջ:

Երկար և բազմակողմանի քննարկման արդյունքում ներկայացվեց անդամավճարների երեք առաջարկ՝ անդամավճարը դարձնել հինգ հազար, տասը հազար և մեկ միլիոն ՀՀ դրամ:

Առաջարկները դրվեցին քվեարկության, և համապատասխանաբար 1 կողմ, 4 կողմ և 2 կողմ ձայներով որևէ տարբերակ չընդունվեց:


Որոշում: Մերժել «Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության անդամների համար փարեկան անդամավճարի չափը հինգ հազար, փաս հազար, մեկ միլիոն ՀՀ դրամ սահմանելու առաջարկները:

2. Մի շարք անձանց «Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպությանն անդամագրելու մասին:

Կազմակերպության վարչության անդամները տեղեկացվեցին, որ կազմակերպությունը 13 անձանցից ստացել է դիմումներ կազմակերպությանն անդամագրվելու խնդրանքով: Այդ անձանց վերաբերյալ տեղեկություններ ներկայացնելուց հետո առաջարկություն հնչեց բավարարել ստացված դիմումները: Առաջարկը դրվեց քվեարկության և միաձայն ընդունվեց:


Որոշում: Բավարարել կազմակերպության անդամ դառնալու ցանկություն հայտնած 13 անձանցից (անձանց ցանկը կցվում է) ստացված դիմումները և ընդունել նրանց որպես «Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության անդամ:

Նիստի նախագահող՝



Իգոր Մկրտումյան

Նիստի քարտուղար՝



Լիաննա Գալստյան